

թիվ փոխառություններից, մի բան, որ հատուկ է այդ ժամանակաշրջանում միջին հայերենով գրված երկերին:

Ներածության վերջում Ջ. Ռ. Ռասլը նշում է, որ անգլերեն թարգմանությունը հիմնված է բնագրի երկու քննական հրատարակությունների վրա՝ աշխատասիրությանը էմ. Պիվազյանի (Տաղեր, Երևան, 1960) և Նորայր արքեպիսկոպոս Պողոսյանի (Տաղագիրք, Երուսաղեմ, 1958):

Ուսումնասիրված նյութը բաժանված է չորս զլուխների մեջ.

Ա. Սիրո և զարնան երգեր

Բ. Հովհաննես և Աշա

Գ. Իմաստության տաղեր

Դ. Տաղ քաջ Լիպարտի

Ե. Նարեկացու հրաշալիքները

Ջ. Սուրբ Ալեքսանդրոսի տաղը

Զ. Ստեղծման և Աղամի երգեր

Հավելվածում (էջ 188—196) տրված է Գրքեր Նարեկացու երեք զանգերի (երեք

տոնական շարահաններ) անգլերեն թարգմանությունը.

Ա. Գանձ վեց աուր ժենդան

Բ. Գանձ հինգ աուր հոգույ զալստեան

Գ. Գանձ խալվերացի երկրորդ աուր:

Գրքի վերջում զետեղված են բանաստեղծությունների հայերեն բնագրերը (53 էջ առանց էջակալման):

Աշխատությունը հարուստ է ծանոթագրություններով, Հիշյալ լսի զլուխներից ամեն մեկում նախ ներկայացվում է բանաստեղծությունը, ապա տրված է անգլերեն թարգմանությունը և վերջապես՝ ծանոթագրությունները:

Ջ. Ռ. Ռասլի այս աշխատությունը անկասկած կատարի հայ միջնադարյան մատենագրության կարկառուն զեմքերից մեկին անգլիախոս զիտական հասարակայնությունը ծանոթացնելու շնորհակալ գործին:

Պատմ. գիտ. դպկադր

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱՎՈՒՄՅՈՒՆՐ, ԵՐԵՎԱՆ, 1987, Էջ 357:

Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչությունը Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է ընծայել Լ. Ս. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» խորագրով աշխատությունը, որը, ինչպես հավաստվում է նախապես, «նվիրված է V դարի գրական հայերենի բառակազմական համակարգի ամբողջական նկարագրությանը»:

Դա, անշուշտ, լեզվաբանական-գիտական կարևոր նշանակություն ունեցող խնդիր է, սրի ուսումնասիրմանը ձեռնամուխ լինելով՝ բավական զգալի աշխատանք է կատարել հեղինակը:

Հայտնի է, որ հայ հին գրական լեզվի՝ գրաբարի ուսումնասիրությունը, շատ վաղ ժամանակներից սկսած, զբաղվել են բազմաթիվ հայադեմ-լեզվաբաններ, քերականներ, բառարանագիրներ և ձգտել համակողմանիորեն ներկայացնել նրա իրական պատկերը: Հասկանալի է, որոշակի նվաճումներ են ձեռք բերվել նաև բառակազմական իրողությունների ուսումնասիրման ու լասարանման բնագավառում: Եվ, այնուամենայնիվ, հին հայերենի կամ գրաբարի բառակազմությունը ամբողջա-

կան, սպառիչ լուսարանություն չի ստացել՝ մանավանդ զարգացող լեզվաբանական գիտության առաջադրած նոր պահանջներին համապատասխան:

Լ. Հովսեփյանը այդ նկատառումով էլ ահա գրաբարի բառակազմությունը քննության է առել կառուցվածքային լեզվաբանության առաջադրած կաղապարային սկզբունքներով և փորձել ցույց տալ, թե բառակազմական ինչ պատկեր են ներկայացնում բարդ և ածանցավոր բառերը V դարի գրաբարում:

Լ. Հովսեփյանի աշխատանքն ըստ էության երեք մասից է բաղկացած: Առաջին մասում (էջ 5—94) համառոտաբար խոսվում է ընդհանրապես հայերենի բառակազմության ուսումնասիրման պատմության, նյութի ընտրության ու նկարագրության սկզբունքների, բառակազմական կաղապարների ու միավորների, հիմնականում վյան մասին և հոգ պատրաստվում այդպիսով մյուս երկու մասերի՝ նախ՝ բառաբարդման և ապա՝ ածանցման (տե՛ս Գրամմատիկական բառարան էջք 95—157, 158—357) կաղապարների պատկերման ու վերլուծության համար:

Ուսումնասիրությունը բառապաշարային հարուստ նյութ է պարունակում և բաղադրյալ բառերի կառուցվածքային տեսակների տարաբանումներով ու դասակարգումներով բավարար պատկերացում է տալիս գրաբարի բանականության մասին:

Հեղինակի հիմնական նպատակն է եղել՝ բացահայտել V դարի գրական հայերենի բաղադրյալ բառերի ներքին կառուցվածքը, նրանց բաղադրիչների փոխկապակցությունը և փոխհարաբերությունը: Ըստ որում, ինչպես ասվել է, նա առաջնորդվել է իրոք կառուցվածքային լեզվաբանության մշակած սկզբունքներով և ըստ այդմ էլ կատարել բառաբարդման ու անջատման կաղապարների հանգամանալից վերլուծություն:

Գրաբարի բանականության կաղապարները ներկայացնելու համար դիմելով S—սկզբնահիմք, ձ—ածանց, ի—քերականական մասնիկ կամ թեքում, յ—հոգակապ, Ե—շաղկապ, Բ—նախդիր, S—հիմքի հնչյունափոխված կամ ձևավոր տարբերակ, S'—քերականական ձևավորում ունեցող հիմք... պայմանական նշաններին, և. Հովսեփյանը գրանց համապատասխան կաղապարավորում է իր քարտարանում կամ, ինչպես հասկա սիրում է գործածել, ընտրանքում եղած ավելի քան 23000 բառ-միավորները, ասենք, վ և լ չ են ա տ աւ ա ղ (ավերին, երկնային տվող կամ վերին)՝ երկն-քից տվող, պարզևատու՝ աստծու մասին), ազատագոր, առաջնառնայց, հառնառնգիր, համառնայնից, ազիռնային, ալիառնային, իշառն. առնայնացառն բառերը ներկայացնելով (Sa) j (S'a), SJS, [a (Sa)] j Sf, S(S'j) a j (SjS), (aS)a, [(aS) jS]a, S'a, (S'a)՝ a ըստնաձևումներով:

Բանականության կաղապարների նման բանաձևումներն էլ կազմում են նրա աշխատանքի հիմնախարիսը և սակայն որքան արտաքուստ լեզվաբանական գիտության զարգացման նոր արտահայտություն լինելու տպավորություն են թողնում, այնքան ներքնապես կամ ըստ էության գրաբարի բանականության իրողությունները մութ են ներկայացնում:

Եվ իրոք. գրաբարի բանականության, բառերի կառուցվածքային դրսևորումների ու առանձնահատկությունների, բաղադրիչ մասերի և այլնի մասին պարզ պատկերացում կազմելու համար ընթերցողն ամեն անգամ հարկադրված պետք է լինի տարրալուծելու այդ բանաձևումները և որոշելու, թե բերված օրինակները որքանով են համապատասխանում գրանց:

Բանականության իրողությունները և նրանց օրինակափոխությունները պարզ լեզվով պատկերելու փոխարեն և. Հովսեփյանը բաղադրանակ ու բաղադարող բանաձևումներ է անում, որոնք և, ընկանաբար, հնարավորություն չեն ընձեռել բավարար չափով ճաշակ գրաբարի բանականության համակարգի ամբողջական (ընդգծումն իմն է—Ա. Մ.) նկարագրությունը:

Դրա անհերքելի ապացույցը աշխատանքի՝ բառաբարդման կաղապարներին նվիրված մասն է (էջ 95—157), որտեղ և գրաբարի ոչ թե բոլոր տեսակի բարդությունները, այլ միայն համադրական կազմություններն են քննարկում կամ ավելի ճիշտ՝ կաղապարվում: Իսկ նման մոտեցումը ամենեին էլ պատահական չէ. հեղինակը վերլուծական կամ հարադրական բարդություններից խուսափում ու նրանց սկզբունքային ամբողջական քննությունը առանձին ուսումնասիրության նյութ է համարում, որովհետև հակառակ դեպքում հարկադրված պետք է լինի կատարելու նաև բնագրային-հնագրական աշխատանք: Բայց նա այդպիսի աշխատանք չի կատարել և բավարարվել է հիմնականում բառարանների և մասամբ՝ համաբարբառների ընձեռած տվյալներով, լրերելով վավերական նախադասության մի օրինակ անգամ ամբողջ աշխատանքում:

Առաջ գնալով նշենք, որ գրաբարյան բարդ բառերի կամ բարդությունների քննությունը եթե որոշակի դժվարություններ է հարուցել, ապա ածանցմանը, ընդհակառակը, ավելի դյուրին է եղել: Նախօրինակ ունենալով ճառականության առանձին ենթահամակարգերին նվիրված կարևոր աշխատություններից Վ. Գալստյանի «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» մենագրությունը... և. Հովսեփյանը իր աշխատանքի մեծագույն մասը՝ շուրջ 200 էջ, հատկացրել է գրաբարի ածանցավոր բառերի կաղապարային նկարագրությանը: Ըստ որում պետք է ասել, որ ինչպես առաջին, այնպես էլ այս դեպքում նա կատարել է բանականության մի շարք ոչ ճիշտ վերլուծություններ, թույլ տվել փաստական սխալներ ու վրիպումներ...

Պարզից էլ պարզ է, որ ոչ այլ ոք, քան հենց լեզվի բանականություն ուսումնասիրողը պետք է հստակորեն պատկերացնի բառերի կառուցվածքային բաղադրությունը, բաղադրիչ-ձևավորների բնույթն ու արժեքը և տվյալ դեպքում էլ պայմանական նշանների կիրառմամբ ճիշտ ներկայացնի բառերի կառուցվածքային-կաղապարային իրական պատկերը: Բայց մենք ինչ ենք տեսնում, տեսնում

ենք, որ Լ. Հովսեփյանը, Գրինակ, մի շարք դեպքերում ա հոդակալը, որ բառակազմական մեթոդային դեր է կատարել այնքան լեզվում՝ նազույն ժամանակներից սկսած, հատկապես Ս. Գալստյանին հետևելով՝ առանձին բառակազմական տարր (միավոր) չի համարում և մի շարք վերջածանցների միացնելով՝ նրանց հետ միասին մի բառարազդարիչ է դիտում, ինչպես՝ -արար (աղատարար, բարձրարար... այլև՝ արուարար, բազմարար..., ընտանեարար, որդեարար..., առնարար, զգալարար), -ազար (աշագար, լեզվազար..., այլև՝ գլխազար, միջազար), -ազին (ահագին, գորովագին..., այլև՝ դիագին, զազրագին..., ժողագին), -ազայն (ազահագայն, դառնագայն..., այլև՝ անդրանկագայն, ամբագայն..., ընտանեգայն, յոռեգայն..., առնագայն, իմացագայն), -ազան (ամենազան, աստուածազան..., այլև՝ բազմազան, սրբազան), -աթէա (ախտաթէա, նենգաթէա), -ապան (բանտապան, բարապան..., այլև՝ դոնապան, սենեկապան), -ապա-տիկ (ամենապատիկ, բիւրապատիկ..., այլև՝ բազմապատիկ, հնգապատիկ), -ապէա (առատապէա, ամենապէա..., այլև՝ զազրապէա, խըստապէա), -ասապան (ակասապան, ամարասապան..., այլև՝ բուրասապան, կուսասապան..., այգեսապան, Ասորեսապան) և այլն:

Հասկանալի է, որ դրանք նա մի ամբողջական բառարազդարիչ է ներկայացնում նաև օտարառաբանականությունում և այդպիսով ևս բացասում ինչպես ա հոդակալի, այնպես էլ մի շարք վերջածանցների ինքնությունը և նրանց առանձին բառակազմական արժեքն ու նշանակությունը: Պետք չէ, սակայն, ունենալ լեզվական մեծ զգացողություն համարվելու համար, որ ոչ միայն բառարարողներին, այլև ածանցման՝ նախածանցավոր ու վերջածանցավոր բառերի դեպքում ա հոդակալը ճիշտ և ճիշտ նույն դերն է կատարում, և նրանք, ովքեր այն միացնում են վերջածանցներին, մեխանիստական մոտեցում են հանդես բերում և աղճատ ներկայացնում բառի կառուցվածքը:

Զբաղվելով գրաբարի բառակազմության կառուցվածքային նկարագրությամբ, Լ. Հովսեփյանն ըստ էության անտեսել է նաև նրա պատմական ժամանակաշրջանը և բառերի կառուցվածքային վերլուծությունը, եթե կարելի է ասել, կատարել է հետագա իրավիճակի տեսանկյունից: Արդյունքում սապակել է այն, որ սույնում ու կենդանի մի շարք բաղադրություններ խառնվել են իրար, անտարրալուծելի մի շարք բառեր՝ տարրալուծելի, իսկ տար-

րալուծելի մի շարք բառեր էլ անտարրալուծելի են դարձել: Առանց (<առ+անց>), առա (<առ+ա>), զալար (<զալ+ար>), աւօր (<աւ+օթ>) և այլն բառերն, օրինակ, չեն տրոհվում, իսկ նմանատիպ ծանօթ, զգօն, լուցիկ, վառարար, ճարագ, համառօտ (") և այլն բառերն, ընդհանրապես, տրոհվում և գիտակցվող բաղադրյալ բառեր են ներկայացվում:

Նմանապես պարզ չէ, թե ինչ հիմամբ, ասենք, ամբողջական կամ տակավին չստուգարանված մատակցար. միաճանէլ, շոնմա-րան բառերը (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 267, 319, 544), Լ. Հովսեփյանն առանց վարանելու բաղադրյալ է համարում և միաճանէլը-ը ներկայացնում Sjsa (էջ 30), իսկ առաջին երկուսից կազմված մուսուկարարապէս և շոնմարանի բառերը՝ (SS)a (էջ 259), (Sa)a (էջ 307) բանաձևումներով: Այստեղ էլ նշենք, որ գրախոսվող աշխատանքում թիչ չեն դեպքերը, երբ բառերն ու նրանց բանաձևումները չեն համընկնում կամ հակասում են իրար: Պարունակ <պար- (նախածանց) +ուն (արմատ) +ակ (ածանց)>, այլև՝ պարունակապէս (էջ 211), պարունակակա (էջ 214), պարունակութիւն (էջ 227) բառերն, օրինակ, պարարմատից և -ունակ ածանցից, իսկ բազմապարունակ, ճարպարունակակա, ազգարունակակի և պարունակիմ բառերը պար- նախածանցից, ուն արմատից... կազմված բառեր են համարվում, ներկայացվելով Sj [a (Sa)], a[[a (Sa)]a, a[[a (Sa)]a], (a)Sf)a բանաձևումներով:

Կամ արամատակա (էջ 238), արամատութիւն (էջ 242), գերազանցութիւն (էջ 246), յարածգակից (էջ 129), յարակալարար, յարամեացարար (էջ 243), յարառաղ (էջ 246)..., բառերը, որոնցում արամ (պիւնդ, ամուր), գեր (պիւնդ, բարձր), յար (ամիշտ) բաղադրիչները արմատներ են, բանաձևում են իրրև նախածանցավոր՝ արամ- ...-ակա, ազ-րամ- ...-ութիւն, գեր- ...-ութիւն, յար(ա)-...-արար (") և այլն բառեր: Այդպես և ճիշտ չէ, երբ հար (բարձր)+ն (շաղկապ)+անց (առնցիւր)+իկ (ածանց) բաղադրիչներից կազմված հարառաղի բառը որիչների պես Հովսեփյանը կապում է հարառ (ոչի+իկ) բառի հետ (տե՛ս էջ 221), զլխառամէ՛ երկու արմատից (զլխ- և -առ-) և մեկ ածանցից (-ումն) կազմված=(SS)a (տե՛ս էջ 268) բառ է համարում:

Պետք է առել, որ կաղապարումներով ու բախանումներով ներկայացնելով գրարարի բառակազմությունը, և Հովսեփյանը միշտ չէ, որ գլխավորն ու երկրորդականը, ընդհանրականն ու մասնավորը, կենսունակն ու անկենսունակը, բառակազմական մեծ տեսակարար կշիռ ունեցողն ու չունեցողը տարբերակում է իրարից ու ճիշտ որոշում բառերի բաղադրիչների փոխհարաբերությունները, նրանց բառակազմական իրական արժեքն ու նշանակությունը:

Նա նկատելի վրիպումներ է թույլ տալիս նաև ինչպես նախածանցների, այնպես էլ վերջածանցների քանակային կազմը քննելիս և, օրինակ, Դանը այնպես է պատկերում, որ գրաբարը իրր և վերջածանց ունի, ինչպես՝

առանձինքն—(aS')a, առժամացակն—[(aS)a]a, անօրինակացն—[(SS)a]a, օրէնտդրակացն—[(S'S')a]a, ճարտաճանակացն—[{S(Sa)a}] և այլն, որ, սակայն, ցարդ ոչ ոք չի նկատել...

Կարծում ենք, որ Հովսեփյանը առավել հաջողությամբ իրագործած կլիներ իր հետապնդած նպատակը և «V դարի գրական հայերենի ամբողջական նկարագրությունը» իրոք ամբողջական ձևով ներկայացրած կլիներ, եթե շապավիհներ սոսկ կառուցվածքային լեզվաբանության կաղապարային վերլուծությունների մեթոդին և շանտեսեր բազմադարյան հայ լեզվաբանության փայլուն ավանդույթները:

Բանասիր. գիտ. չափառ
Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ